

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

Արժեթղթերի շուկաներում խորհրդատվական ծառայության մատուցման թիվ

Սույն Պայմանագիրը ստորագրվել է XXXX թվականի XX թ-ին ստորև նշված անձանց կողմից և միջև, որոնք հետագայում համապատասխանաբար կանվանվեն «Կողմ» կամ «Կողմեր».

«Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը, գրանցված և գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, ի -----
--¹, ով գործում է -----² հիման վրա մի կողմից, այսուհետ՝ «Խորհրդատու»
և

_____ (լրացնել Հաճախորդի և լիազորված անձի (առկայության դեպքում) անձնագրային տվյալներ՝ ֆիզ անձի դեպքում, գրանցման վկայականի և լիազորված ներկայացուցչի տվյալներ՝ իրվաբանական անձի դեպքում) մյուս կողմից, այսուհետ՝ «Հաճախորդ»:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրով՝ Խորհրդատուն պարտավորվում է Հաճախորդի հանձնարարությամբ և առաջադրանքով մատուցել սույն Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները (այսուհետ՝ «Ծառայություններ»), իսկ Հաճախորդն պարտավորվում է վճարել Խորհրդատուին դրանց համար՝ սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

1.2. Սույն Պայմանագրով Խորհրդատուն պետք է մատուցի հետևյալ խորհրդատվական Ծառայությունները ներդրումային (արժեթղթերի) ոլորտում՝

1.2.1. Հիմնական ներդրումային ծառայություններ՝ օրական (աշխատանքային օրեր) կտրվածքով անհատական ներդրումային առաջարկությունների տրամադրման՝ «զնել», «վաճառել», «չեզոք դիրք/ձեռնպահ մնալ» ֆորմատով. սույն կետում նշված ներդրումային առաջարկությունները թեև տրամադրվում են Խորհրդատուի կողմից անհատական ներդրումային առաջարկություններ ուղղարկելու միջոցով, սակայն կարող է միննույն առաջարկությունը տրամադրված լինել նաև այլ հաճախորդների՝ բացառելով շահերի բախումը հաճախորդների և Խորհրդատուի հետ:

¹ Նշել իրավասու անձի պաշտոնը, անունը, ազգանունը
² Նշել իրավասությունը սահմանող փաստաթուղթը /օրինակ, գլխավոր տնօրենի դեպքում՝ կանոնադրություն, լիազորված անձի դեպքում՝ լիազորագրի տվյալներ և այլն/

1.2.2. Խորհրդատուի հայեցողությամբ օժանդակ ծառայություններ՝ բանավոր կամ գրավոր խորհրդատվություն, ներդրումային հնարավորությունների քննարկում, մտքերի փոխանակում, ներդրումային տեղեկատվության և նյութերի տրամադրում՝ Խորհրդատուի հայեցողությամբ, ընհանուր առաջարկությունների տարածում:

2. Ծառայությունների տեսակները

2.1.1. Խորհրդատուն ծառայությունները մատուցելիս Հաճախորդին առաջարկում է, իսկ Հաճախորդը ընդունում սակագնային հետևյալ փաթեթները՝

i _____ Հավելված 1 _____ 14TRD PL 75-06-01

ii _____ Հավելված 2 _____

2.1.2. Հավելված 1-ը, հանդիսանալով սույն պայմանագրի անբաժանելի մասը, Կողմերի համար պարտադիր է և կիրառվում է, եթե Հաճախորդը համաձայնվել է դրանով սահմանված սակագնային փաթեթին 2.1.1(i) կետի դիմաց նշում անելու միջոցով:

2.1.3. Հավելված 2-ը, հանդիսանալով սույն պայմանագրի անբաժանելի մասը, Կողմերի համար պարտադիր է և կիրառվում է, եթե Հաճախորդը համաձայնվել է դրանով սահմանված սակագնային փաթեթին 2.1.1(ii) կետի դիմաց նշում անելու միջոցով:

2.1.4. Եթե հաճախորդը ցանկանում է փոխել սակագնային փաթեթը, ապա Խորհրդատուին սույն պայմանագրով սահմանված հուսալի կապի միջոցներից մեկով գրավոր ծանուցում է այդ մասին՝ ծանուցման մեջ նշելով համապատասխան 2.1.1. կետի համապատասխան ենթակետը՝ ըստ այդմ ներկայացնելով սույն պայմանագրով սահմանված պայմաններով համապատասխան սակագնային փաթեթից օգտվելու և նախորդ սակագնային փաթեթից օգտվելը դադարեցնելու օֆերտա: Խորհրդատուի կողմից համապատասխան հաստատում ստանալուց հետո այդպիսի օֆերտան համարվում է ընդունված և կողմերի համար ուժի մեջ է մտնում սույն պայմանագրի համապատասխան հավելվածը՝ փոխարինելով մինչ այդ գործողին:

3. Պայմանագրի գործողության ժամկետը: Պայմանագրի լուծումը

3.1. Սույն Պայմանագիրը կարող է լուծվել Կողմի նախաձեռնությամբ միակողմանիորեն: Այդ դեպքում Պայմանագրի լուծման մասին Կողմը պետք է նախապես ծանուցի մյուս Կողմին առնվազն 10 (տաս) օր առաջ գրավոր եղանակով:

3.2.Սույն պայմանագրով մատուցվող ծառայությունների փաթեթներից որևէ մեկով ծառայություններ մատուցելուց կամ ստանալուց հրաժարվելու դեպքում գործում է նույն կարգը, որը գործում է 3.1. կետի համաձայն պայմանագիրը ամբողջությամբ լուծելու համար:

4. Կողմերի իրավունքներն և պարտավորությունները

4.1. Խորհրդատուն պարտավոր է՝

4.1.1. Հաճախորդին խորհրդատվություն և Ծառայություններ մատուցելու ընթացքում օգտագործել օրինական մեթոդներ և միջոցներ ու ղեկավարվել ՀՀ օրենսդրությամբ.

4.1.2. Առանց Հաճախորդի համաձայնության երրորդ անձանց առջև չհրապարակել Ծառայությունների մատուցման ընթացքում Հաճախորդից ստացված այն տեղեկությունները, տվյալները և փաստաթղթերը, որոնք կրում են գաղտնի բնույթ կամ կազմում են Հաճախորդի առևտրային գաղտնիքը: Նշված պարտավորությունը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ նման հրապարակում պահանջվում է ՀՀ օրենսդրության կամ դատական ակտով, կամ անհրաժեշտ է ծառայությունների մատուցման համար:

4.2. Խորհրդատուն իրավունք ունի՝

4.2.1. Ծառայությունների մատուցման համար պահանջել սույն Պայմանագրով նախատեսված կարգով և չափով վարձատրություն.

4.2.2. Հաճախորդից պահանջել և ժամանակին ստանալ Ծառայությունների պատշաճ մատուցման նպատակով տվյալ Ծառայության կամ առաջադրանքի հետ առնչություն ունեցող և պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները.

4.3. Հաճախորդն պարտավոր է՝

4.3.1. Սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում վճարել Խորհրդատուին կատարված կամ մատուցված Ծառայությունների դիմաց.

4.3.2. Խորհրդատուի պահանջով վերջինիս ժամանակին տրամադրել տվյալ Ծառայության կամ առաջադրանքի հետ առնչություն ունեցող փաստաթղթերը և տեղեկություններ, տրամադրել Խորհրդատուի կողմից Ծառայությունների կատարման համար անհրաժեշտ լրացուցիչ ցուցումները, ապահովել Խորհրդատուի աշխատողներին անհրաժեշտ պարզաբանումներ տրամադրելու համար իր աշխատողների ներկայությունը:

4.4. Հաճախորդն իրավունք ունի՝

4.4.1. Սույն Պայմանագրի շրջանակներում առաջարկություններ անել կապված Օառայությունների մատուցման և կատարման հետ:

5. Օառայությունների դիմաց վճարման և փոխհաշվարկների իրականացման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.2 կետով և դրա ենթակետերով նախատեսված Օառայությունների մատուցման համար վճարման ենթակա սակագինը, դրա վճարման կարգը, պայմանները և ժամկետները, ինչպես նաև փոխհաշվարկների իրականացման կարգը և ժամկետները որոշվում են՝ 2.1.2-2.1.4 կետերում նշված հավելվածներով, ընդ որում տվյալ հավելվածները ենթակա են Խորհրդատուի կողմից միակողմանի փոփոխության՝ Հաճախորդին համապատասխան ծանուցում ուղղարկելու միջոցով՝ նախատեսված փոփոխությունից 11 օր առաջ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Հաճախորդն պատասխանատվություն է կրում Խորհրդատուին սխալ և ոչ լիարժեք տեղեկությունների տրամադրման համար: Խորհրդատուի կողմից պարտավորությունների կատարումը հանդիպական է Հաճախորդի կողմից իր պարտավորությունների կատարմանը:

6.2. Հաճախորդը գիտակցում է, որ ներդրումային ոլորտում խորհրդատվությունը չի կարող դիտարկվել որպես եկամուտի հանգեցնող ներդրումային որոշումների կայացման համար բացարձակ ճիշտ և միանշանակ հիմք և համաձայնվում է, որ իր ներդրումային որոշումների կայացման և ներդրումների համար կրում է լիակատար պատասխանատվություն և չի կարող որևէ վնաս պայմանավորել Խորհրդատուից ստացած խորհրդատվությամբ կամ տեղեկություններով:

6.3. Խորհրդատուն պատասխանատվություն չի կրում այն կորուստների և/կամ վնասների համար, որոնք Հաճախորդը կրում է Խորհրդատուի տրված առաջարկությունների և տեղեկատվությունների հիման վրա որոշում կայացնելիս: Խորհրդատուի պատասխանատվությունը սահմանափակվում է այն դեպքերով, երբ Հաճորդը ապացուցում է որ՝

6.4. Խորհրդատուն դիտավորությամբ հաճախորդին տվել է վնասների հանգեցնող ներդրումային առաջարկություններ՝ ակնհայտ գիտակցելով համապատասխան ներդրումային առաջարկության վնասաբերությունը, այդ թվում շահերի բախման իրավիճակում

- 6.5. Հաճախորդին տվել է ներդրումային առաջարկություններ որոնք անխուսափելիորեն պետք է հանգեցնեն կորուստների և ցանկացած առողջ բանականություն ունեցող ողջամիտ անձ նման գործարքներ չէր կնքի (օրինակ՝ խորհուրդ տալով ներդրումներ կատարել սնանկ ըկերության արժեթղթերում)
- 6.6. Հաճախորդը ընդունում է որ 1.2.2. կետում նշված ծառայությունների մատուցումը Խորհրդատուի հայեցողությունն է, որը կրում է 1.2.1 ծառայությանը և կամ Խորհրդատուի մեկ այլ հիմնական ներդրումային ծառայությանը օժանդակող բնույթ և Խորհրդատուն պարտավոր չէ մատուցել այդ ծառայությունները և պատասխանատվություն չի կրում դրանք չմատուցելու համար:
- 6.7. Ցանկացած դեպքում Խորհրդատուի պատասխանատվությունը Հաճախորդի առջև սահմանափակվում է իրական վնասի հատուցման պարտավորությամբ՝ 6.1-6.6 կետերում նշված սահմանափակումները հաշվի առնելով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնց վրա հասնելու արդյունքում անհնարին է դառնում սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 /մեկ/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր եղանակով տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԿԱՊԻ ՀՈՒՍԱԼԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՍՑԵՆԵՐ

8.1. Սույն պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև տեղեկատվության ցանկացած փոխանակում, հաղորդագրություն, փաստաթղթերի ներկայացում, փոխանցում, փոխանակում համարվում է պատշաճ կերպով իրականացված, եթե փաստաթուղթն առաքվել է հետևյալ հասցեներով՝

- 1) Խորհրդատուի համար՝ ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 2, էլ. փոստ՝ advisory@ameriabank.am, հեռ՝ +374 10 513167,

2) Հաճախորդի համար՝ _____,
ֆաքս՝ _____, էլ. փոստ՝ _____,
հեռ՝ _____

8.2. Կողմերը սույնով հավաստում են, որ 7.1 կետում նշված հասցեներով առաքված հաղորդագրությունը (այդ թվում՝ ներդրումային առաջարկությունները) համարվում է պատշաճ կերպով առաքված՝ կապի հուսալի միջոցներով:

8.3. Սույն պայմանագրի 1.2.1. կետում նշված ներդրումային առաջարկությունները Խորհրդատուն Հաճախորդին ներկայացնում է՝
 հայերեն անգլերեն (լեզուներով):

8.4. Սույն պայմանագրի շրջանակներում Խորհրդատուի հետ Հաճախորդի հարաբերությունների համար պատասխանատու և իրավասու լիազորված անձ է հանդիսանում _____:

8.5.8.4 կետը չի կիրառվում, եթե Հաճախորդը ֆիզիկական անձ է և ինքն է հանդես գալիս որպես պատասխանատու/իրավասու անձ Խորհրդատուի հետ հարաբերություններում կամ, իրավաբանական անձ Հաճախորդի դեպքում, վերջինիս անունից հանդես է գալիս տնօրենը/գործադիր իրավասու մարմինը:

9. Կարգավորող օրենսդրությունը և վեճերի լուծման կարգը

9.1. Սույն Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.2. Սույն Պայմանագրի կապակցությամբ և դրանից ծագած բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ 90 աշխատանքային օրվա ընթացքում: Սահմանված ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի վեճի լուծումը հանձնել ՀՀ տարածքում իրավասու դատարանի քննությանը:

10. Եզրափակիչ դրույթներ

10.1. Սույն Պայմանագրում, ներառյալ Հավելվածում, ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե կատարվում է գրավոր և ստորագրվում է Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից, բացառությամբ՝ սույն պայմանագրի 2.1.5 կետով նախատեսված դեպքի, ինչպես նաև սույն պայմանագրի հավելվածների՝ որոնք ենթակա են փոփոխության Խորհրդատուի կողմից միակողմանիորեն՝ նախատեսված փոփոխությունից 11 օր առաջ Հաճախորդին ծանուցելու միջոցով, իսկ Հաճախորդը սույնով համաձայնում է փոփոխության այդպիսի կարգի:

10.2. Եթե սույն Պայմանագրի որևէ հոդված կամ հոդվածի կետ ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր, անիրագործելի կամ օրենսդրությանը

չհամապատասխանող է ճանաչվում, ապա դա չի ազդում սույն Պայմանագրի մյուս հոդվածների և կետերի վավերության վրա: Սույն Պայմանագրի որևէ հոդված կամ կետ անվավեր կամ անիրագործելի ճանաչվելու դեպքում, Կողմերը համաձայն են անմիջապես համատեղ բանակցել, փորձելով տվյալ հոդվածը կամ կետը փոխել այնպես, որ այն համարվի վավեր և կիրառելի, ինչպես նաև առավել հնարավոր չափով արտացոլի Կողմերի միջև ի սկզբանե ձեռք բերված նպատակը համապատասխան հարցի կամ հարցերի կարգավորման վերաբերյալ:

10.3. Սույն Պայմանագիրը և դրա Հավելվածը կազմված են երկու օրինակից հայերեն լեզվով: Պայմանագրի երկու օրինակները ունեն հավասար իրավական ուժ:

10.4. Սույն պայմանագիրը ստորագրելով հաճախորդը հավաստում է, որ գիտակցում է այն փաստը, որ ինքը դասակարգվել է որպես պրոֆեսիոնալ հաճախորդ՝ բոլոր գործարքների գծով և ի վիճակի է գնահատել և կառավարել ներդրումային, տվյալ դեպքում բրոքերային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը: Եթե Հաճախորդը կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը, պրոֆեսիոնալ հաճախորդի պարտավորությունն է դիմել ներդրումային ծառայություններ մատուցող անձին՝ իրեն որպես բոլոր կամ որոշակի գործարքների գծով ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ վերաբերվելու համար, ինչը հնարավորություն կտա օգտվել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջներից: Հաճախորդը պարտավոր է Խորհրդատուին տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել իր պրոֆեսիոնալ դասակարգման վրա՝ հաշվի առնելով ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի՝ ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով սահմանված կանոնները:

10.5. Սույն պայմանագրի 9.4 կետը կիրառվում է սույն պայմանագիրը կնքելուց առաջ սույն պայմանագրի գործողության նպատակներով որպես պրոֆեսիոնալ դասակարգված Հաճախորդների նկատմամբ:

10.6. Կողմերի միջև սույն Պայմանագրից բխող բոլոր ծանուցումները, պահանջները և այլ հաղորդակցությունը համարվում է պատշաճ կատարված, եթե այն կատարվում է գրավոր ձևով Կողմերի պատշաճ լիազորված անձանց առձեռն հանձնելու եղանակով կամ առաքվում են հետևյալ հասցեներով՝

11. Կողմերի ստորագրությունները և վավերապայմանները



«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան,
Վ. Սարգսյան 2

-----³

ՀԱՃԱԽՈՐԴ

³ Նշել իրավասու անձի պաշտոնը, անունը, ազգանունը